

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

Պարտքերի հավաքագրման քաղաքականություն

I. Նպատակը

a. Cedars-Sinai բժշկական կենտրոնը, Cedars-Sinai Marina del Rey հիվանդանոցը, Cedars-Sinai բժշկական խնամքի հիմնադրամը (միասին՝ «Կազմակերպությունը») ցուցաբերում են կարեկցական խնամք հիվանդներին, երբ նրանք հիվանդանոցային ծառայությունների կարիք են ունենում: Բոլոր բուժառուները կամ նրանց երաշխավորները ֆինանսական պատասխանատվություն են կրում Կազմակերպությունում ստացած ծառայությունների առնչությամբ և պետք է պայմանավաճություններ ձեռք բերեն վճարման համար ծառայությունների մատուցումից առաջ կամ հետո: Նման պայմանավորվածությունները կարող են ներառել ապահովագրական պլանի միջոցով վճարումները, այդ թվում՝ Դաշնային և Կալիֆորնիայի կառավարության կողմից առաջարկվող ծրագրերի միջոցով վճարումները: Վճարման պայմանավորվածությունները կարող են կատարվել նաև անմիջապես բուժառուի հետ՝ հաշվի առնելով Կազմակերպության վճարման պայմանները: Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել, որ ֆինանսական պարտավորությունների մասին հաղորդակցություններն անհիմն կերպով չազդեն բուժման պլանավորման վրա:

b. Սույն Քաղաքականությունը սահմանում է կազմակերպության հանդեպ պարտք ունեցող բուժառուների հաշիվների հավաքագրման արդար, ողջամիտ և հետևողական միջոցների սահմանման ուղեցույցներ և ընթացակարգեր, նաև երաշխավորում է, որ Կազմակերպությունը և Կազմակերպության հետ համագործակցող հավաքագրման ցանկացած գործակալություն իրականացնեն բոլոր բուժառուների, նրանց ընտանիքների և այլ անձանց բուժումն արդարությամբ, արժանապատվության, կարեկցանքով և հարգալից կերպով: Ի լրումն՝ սույն Քաղաքականությունը երաշխավորում է, որ Կազմակերպությունը և իրեն նշանակված հավաքագրման գործակալությունները կհամապատասխանեն բոլոր կիրառելի՝ Դաշնային և Կալիֆորնիայի օրենքներին, կազմակերպչական քաղաքականությանն ու ընթացակարգերին, ինչպես նաև ոլորտի լավագույն փորձին, այդ

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

Թվում՝ առանց սահմանափակման հետևյալ օրենքներին և դրանց կիրառման կանոնակարգերին՝

- i. 26 U.S.C. Բաժին 501(r) և սույնին հետևող Լրացուցիչ պահանջներ որոշ հիվանդանոցների համար:
- ii. 15 U.S.C Բաժին 1692 և սույնին հետևող Պարտքի հավաքագրման փորձառություններ:
- iii. Կալիֆորնիայի Քաղաքացիական օրենսգրքի բաժին 1788 և դրան հաջորդող Պարտքի հավաքագրման արդար փորձառություններ:
- iv. Կալիֆորնիայի Առողջության և Անվտանգության օրենսգրքի բաժին 1339.50 և դրան հաջորդող Վճարողների իրավունքների օրինագիծ:
- v. Կալիֆորնիայի Առողջության և Անվտանգության օրենսգրքի բաժին 127400 և դրան հաջորդող Հիվանդանոցային արդար գների քաղաքականություն:
- vi. Ամերիկյան հիվանդանոցների ընկերակցության (American Hospital Association) հիվանդների հաշվեգրերի ուղեցույցներ:

II. Քաղաքականություն

a. Ընդհանուր կիրառություններ

- i. Եթե բուժառուի հաշիվը վճարման է ենթակա ապահովագրական ընկերության կողմից, սկզբնական հաշիվը ուղարկվում է անմիջապես նշանակված ապահովագրողին՝ ապահովագրողի կողմից պարտքի ցանկացած կամ ամբողջ գումարը ստանալու համար:
- ii. Ապահովագրական վճարումներից հետո բուժառուների հաշվեկշիռները անմիջապես կհաշվեգրվեն բուժառուին:
- iii. Կազմակերպությունը և բուժառուն կիսում են բոլոր բուժառուների հաշիվների ժամանակին և ճշգրիտ լուծման պատասխանատվությունը: Այս գործընթացում կարևոր է բուժառուների համագործակցությունը և հաղորդակցությունը: Կազմակերպությունը պետք է ողջամիտ և հետևողական ջանքեր գործադրի՝

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

բուժառուներին իրենց ֆինանսական պարտականությունների կատարման հարցում օգնելու համար:

- iv. Վճարման պլանները կարող են կազմակերպվել Կազմակերպության հետ՝ յուրաքանչյուր դեպքի հիման վրա: Վճարման պլանները կարող են կնքվել Կազմակերպության Ֆինանսական օգնության քաղաքականության շրջանակներում օգնության տրամադրման հետ կապված կամ որպես Կազմակերպության և բուժառուի միջև պարտքի վճարման պայմանավորվածության մաս:
 - 1. Որպես կանոն՝ վճարման պլանները պետք է ունենան 12 ամսից ոչ ավել ժամկետ և պետք է լինեն առանց տոկոսագումարների և կարգավորման վճարների:
 - 2. Բուժառուի կամ երաշխավորի պարտականությունն է կապվել Կազմակերպության հետ, հանգամանքների փոխվելու և վճարման պլանի պայմանները չհամապատասխանելու դեպքում:
 - 3. Հաստատվելուց հետո վճարման պլանի պայմաններին համապատասխան վճարումների կատարման ձախողումը համարվում է պարտազանցում, և Կազմակերպությունը կարող է չեղարկել վճարման պլանը և սկսել հավաքագրման գործողությունը միայն բուժառուի կողմից վճարման ենթակա գումարը ցանկացած շարունակական 90 օրվա ընթացքում չվճարելուց հետո՝ համաձայն Դաշնային և Կալիֆորնիայի օրենքների:
 - a. Մինչ վճարման պլանի չեղարկումը, Կազմակերպությունը պետք է ողջամիտ փորձ կատարի բանավոր և գրավոր ծանուցել բուժառուին, որ վճարման պլանը կարող է չեղարկվել, և հնարավոր է՝ բուժառուի խնդրանքով վերանայվեն պլանի պայմանները:
 - b. Կազմակերպությունը պետք է փորձի վերանայել պարտազանցված վճարման պլանի պայմանները բուժառուի կողմից հայտի դեպքում:

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- c. Վճարման պլանի ցանկացած չեղարկման դեպքում բուժառուի ֆինանսական պատասխանատվությունը չպետք է գերազանցի վճարման պլանի շրջանակներում համաձայնեցված գեղջված մայր գումարը, և բուժառուն կստանա վարկ ընդլայնված վճարման պլանի շրջանակներում նախկինում կատարված ցանկացած վճարման համար:

- v. Կազմակերպությունը բոլոր բուժառուներին տրամադրում է հետևյալ տեղեկությունը և հատուկ օգնությունը՝
 1. Ֆինանսական օգնության քաղաքականության պարզ լեզվով ամփոփագիրը:
 2. Ֆինանսական օգնության դիմում («FAP (Financial Assistance Application) Դիմում») և/կամ դիմում Medi-Cal-ին կամ պետական աջակցության այլ համապատասխան ծրագրին չապահովագրված բուժառուներին, ովքեր ստանում են ոչ շտապ օգնություն՝ ընդունվելիս կամ դուրս գրվելուց առաջ, կամ որոշ հանգամանքներում՝ ծառայությունների մատուցման 72 ժամվա ընթացքում:
 3. Աջակցություն ֆինանսական կամ պետական օգնության համար դիմելու հարցում՝ առանց հիվանդից գանձում կատարելու:
 4. Կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների գրավոր հաշիվ:
 5. Ամփոփ քաղվածք, ըստ պահանջի, ապահովագրության կողմից ակնկալվող վճարումով, եթե կիրառելի է, և բուժառուի կողմից վճարվող և վճարման ենթակա որևէ գումարով կամ բոլոր գումարներով:
 6. Գրավոր հայտ, որ բուժառուն տրամադրում է տեղեկություն իր առողջության ապահովագրական հատուցման վերաբերյալ, եթե արդեն չի տրամադրել:

- b. Հավաքագրման արտակարգ գործողությունների համար պահանջվող հաստատումներ

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

Կազմակերպությունը համապատասխանում է պարտքերի հավաքագրման գործելակերպին առնչվող Դաշնային և Կալիֆոռնիայի իրավական և կարգավորող պահանջներին: Կազմակերպությունը չպետք է նախաձեռնի Հավաքագրման արտակարգ գործողություն, բացառությամբ սույն քաղաքականության և կիրառելի օրենսդրության: Կազմակերպությանը և կազմակերպության հետ համագործակցող հավաքագրման ցանկացած գործակալության.

- i. Երբեք չի թույլատրվում ներգրավվել հետևյալ ECA-ներում՝
 - 1. Վաճառել բուժառուի պարտքը:
 - 2. Կալանք դնել անհատի աշխատավարձի վրա:
 - 3. Տարածել բռնագանձում անշարժ գույքի վրա:
 - 4. Կալանք դնել կամ բռնագրավել այլ անձնական գույքի անհատի բանկային հաշիվը:
 - 5. Պատճառ դառնալ անհատի կալանավորման կամ կալանադրման դատական կարգադրության:
 - 6. Տրամադրել ծանուցում կամ իրականացնել բուժառուի հիմնական բնակության վայրի վաճառք:
 - 7. Պահանջել վճարում նախքան բժշկական անհրաժեշտ օգնություն ցուցաբերելը՝ նախնական խնամքի համար չմարված հաշիվների պատճառով:
 - 8. Հետաձգել կամ մերժել բժշկական առումով անհրաժեշտ խնամքը՝ Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ընդգրկված նախկինում տրամադրված խնամքի համար հաշիվը չվճարելու պատճառով:
- ii. Սպասել դուրսգրումից հետո առաջին հաշվեգրման քաղվածքի օրվանից 180 օր՝ նախքան ֆիզիկական անձի վերաբերյալ որևէ բացասական տեղեկություն սպառողական վարկի հաշվետվության գործակալություններին հաղորդելը՝

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

համաձայն կիրառելի օրենքի: Այս գործողությունը երբեք չի թույլատրվում ցածր եկամուտ ունեցող և ապահովագրություն չունեցող անձանց համար:

- iii. Նախքան հավաքագրման որևէ այլ գործողություն սկսելը, պետք է ստանա Գլխավոր ֆինանսական տնօրենի կամ նրանց նշանակված անձի հաստատումը, ինչպես հաստատվել է Գլխավոր ֆինանսական տնօրենի և նախագահի կողմից:
- iv. Չպետք է օգտագործի բուժառուի FAP Դիմումի առնչությամբ Կազմակերպության կողմից ստացված տեղեկությունը՝ հավաքագրման աշխատանքների համար ֆինանսական օգնության նպատակով:

c. Հավաքագրման գործողությունների կասեցում

- i. **Առկախ ֆինանսական օգնության FAP դիմում:** Եթե բուժառուն պատշաճ կերպով ներկայացրել է հաստատված FAP Դիմում, Կազմակերպությունը պետք է անհապաղ կասեցնի հաշվի տրամադրումը հավաքագրման գործակալությանը կամ նախաձեռնած ցանկացած ECA-ին մինչև դիմումի գործընթացի ավարտը կամ 30 օր՝ անկախ ժամանակահատվածի ավելի երկար լինելուց:
- ii. **Կառավարության կողմից հովանավորվող առկախ հատուցում:** Կառավարության կողմից հովանավորվող հատուցման կամ ծրագրերի համար առկախ դիմում ունեցող բուժառուների համար Կազմակերպությունը չպետք է գիտակցաբար հաշիվը փոխանցի հավաքագրման գործակալությանը՝ սկզբնական հաշվեգրման, դուրսգրման օրվանից 240 օր առաջ:
- iii. **Համագործակցություն չմարված հաշիվը մարելու համար:** Կազմակերպությունը չպետք է գիտակցաբար տրամադրի հաշիվ հավաքագրման գործակալությանը բուժառուների ֆինանսական օգնությանը համապատասխանող բաժնեմասերի առնչությամբ, կամ եթե բուժառուն բանակցել է վճարման պլանի շուրջ և ողջամտորեն համագործակցում է չմարված հաշիվը մարելու համար: Հավաքագրման գործողությունները կվերսկսվեն կիրառելի օրենքների և

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

կանոնակարգերին համապատասխան, եթե բուժառուներ/երաշխավորը խախտի վճարման պլանը:

iv. Հիվանդանոցային հաշվի բողոքարկման ծրագրի առկախ ծանուցում:

Կազմակերպության հավաքագրման գործակալությունների կողմից վճարումների հավաքագրման բոլոր գործողությունները կդադարեցվեն այն ծանուցումը ստանալուց հետո, որ բուժառուներ կայացրել է բողոք Առողջապահական խնամքի հասանելիության և տեղեկատվության վարչության («HCAI (Department of Health Care Access and Information)») Հիվանդանոցային հաշիվների բողոքարկման ծրագրին: Հավաքագրման գործակալության գործողությունները չեն վերսկսվի այնքան ժամանակ, քանի դեռ բողոքը չի լուծվել, ինչպես հաստատված է HCAI-ի կողմից:

d. Ֆինանսական օգնության իրավունակությունը որոշելու ողջամիտ քայլեր: Նախքան հավաքագրման գործակալությանը հաշիվ հատկացնելը կամ որևէ ECA նախաձեռնելը, Կազմակերպությունը պետք է ձեռնարկի հետևյալ քայլերը՝ բուժառուի ֆինանսական օգնության իրավունակությունը որոշելու համար, ըստ կիրառելիության.

i. Ծանուցումների, ստուգումների և ոչ իրավունակ քանակների վրա հիմնված ողջամիտ ջանքեր

1. Կազմակերպությունը պետք է ծանուցի բուժառուներին իր ֆինանսական օգնության ծրագրի մասին նախքան հավաքագրման գործակալությանը հաշիվ հատկացնելը կամ խնամքի համար վճարում ստանալու համար որևէ ECA նախաձեռնելը:
2. Եթե բուժառուն չի ներկայացրել FAP Դիմում կամ ճանաչվել է ոչ իրավունակ ֆինանսական օգնության համար, ECA-ները կարող են նախաձեռնվել կիրառելի օրենքի թույլտվությամբ և համաձայն սույն Քաղաքականության:

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

3. Կազմակերպությունը չպետք է որևէ բուժառուի հաշիվ տրամադրի հավաքագրման գործակալությանը, քանի դեռ Կազմակերպությունը նախ չի կատարել իր հնարավորության սահմաններում, ողջամիտ ջանքերի գործադրմամբ բուժառուի պրոֆիլի/ստուգում և չի որոշել, որ բուժառուն.
 - a. Իրավունակ չէ վճարողների այլընտրանքային աղբյուրներին:
 - b. Համաձայն չէ պետական ապահովագրության կամ ծրագրերի համար դիմելու համար:
 - c. Համաձայն չէ վճարման պլանի/ընդլայնված վճարման պլանի հետ կամ այլևս չի համագործակցում քննարկված վճարման պլանի հետ:
- ii. **Ենթադրական իրավունակություն:** Կազմակերպությունը կարող է որոշել, որ բուժառուն իրավունակ է ֆինանսական օգնության համար՝ հիմնվելով ենթադրյալ իրավունակության գործընթացի վրա: Ենթադրյալ իրավունակության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- iii. **Վերջնական ծանուցում և ծանուցումներ բուժառուներին գործողություններից 30 օր առաջ:**
 1. Համաձայն Դաշնային օրենքի՝ հավաքագրման գործակալությանը հաշիվ հատկացնելու կամ որևէ ECA-ի նախաձեռնումից առնվազն 30 օր առաջ Կազմակերպությունը պետք է.
 - a. Տրամադրի պարզ լեզվով ամփոփագիրը:
 - b. Բացահայտի այն ECA-ները, որոնք Կազմակերպությունը մտադիր է նախաձեռնել, և նշի վերջնաժամկետ, որից հետո դրանք կարող են նախաձեռնվել, որը կարող է լինել գրավոր ծանուցման տրամադրման օրվանից ոչ շուտ, քան 30 օր հետո:
 - c. Նախքան որևէ ECA նախաձեռնելը, ողջամիտ ջանքեր գործադրի ֆինանսական օգնության ծրագրի և FAP Դիմումի հետ կապված

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

օգնություն ստանալու մասին բուժառուին բանավոր ծանուցելու համար:

2. Կալիֆոռնիայի օրենսդրության համաձայն՝ մինչ Կազմակերպության կողմից հավաքագրողներին հաշիվ տրամադրելը, Կազմակերպությունը պետք է բուժառուին ուղարկի վերջնական ծանուցում հետևյալ տեղեկատվությամբ.
 - a. Հաշվեգրվող Կազմակերպության անվանումը:
 - b. Նշանակվող հաշվի մատուցման ամսաթիվը(երը):
 - c. Բուժառուի առողջական ապահովագրության անվանումը և պլանի տեսակը:
 - d. Ֆինանսական օգնության ծանուցումների, դիմումների և/կամ որոշումների հետ կապված ամսաթիվ (ամսաթվեր):
 - e. Ֆինանսական օգնության FAP դիմում:
 - f. Մանրամասն հաշիվ ստանալու վերաբերյալ տեղեկություն:

iv. Ծանուցում նախքան գործողություններ սկսելը՝ բուժման մի քանի փուլերի դեպքում:

Կազմակերպությունը կարող է բավարարել բուժման բազմաթիվ փուլերի համար վերը նշված ծանուցման պահանջները բազմաթիվ վճարումների քաղվածքներ ընդգրկող ծանուցման մեջ: Այնուամենայնիվ, ամբողջական լինելու դեպքում Կազմակերպությունը պետք է ձեռնպահ մնա հավաքագրման գործակալությանը պարտք նշանակելուց կամ ECA նախաձեռնելուց մինչև ամբողջականության մեջ ներառված բուժման ամենավերջին փուլի համար առաջին դուրսգրումից հետո հաշվի քաղվածքը տրամադրելուց 120 օր:

e. Հավաքագրման գործակալություններին բուժառուների հաշիվների տրամադրում

- i. Երբ Կազմակերպությունը հաշիվ է տրամադրում հավաքագրման գործակալությանը, հավաքագրման ենթակա գումար է համարվում նախկինում որևէ կամ բոլոր գնիջեցումների ենթարկված պայմանավորվածություններից կամ հրաժարումներից հետո հաշվեկշռի վրա կիրառված մնացյալ գումարը:

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- ii. Որոշակի շեմերին համապատասխանող հաշվեկշիռները վերանայվում են կա՛մ տնօրենի օգնականի, կա՛մ բուժառուների սպասարկման գործադիր տնօրենի կողմից: Ի լրումն՝ Կազմակերպությունը սահմանել է նվազագույն շեմ՝ հավաքագրող գործակալությունը հաշիվներ տրամադրելու համար:
- iii. Եթե հավաքագրման գործակալությունը որոշում է, որ բուժառուի հաշիվը համապատասխանում է վճարման այլընտրանքային աղբյուրին, կամ որոշում է, որ բուժառուն չունի բավարար ակտիվներ, հավաքագրման գործակալությունը պետք է հաշիվը վերադարձնի Կազմակերպությանը՝ որոշման և հիմնավորող տվյալների բացատրությամբ: Կազմակերպությունը փորձ կկատարի հավաքագրել այլընտրանքային աղբյուրից և/կամ կաշիսատի ապահովել բուժառուի իրավունակությունը ֆինանսական օգնության համար:
- iv. Եթե բուժառուն հարցնում է հավաքագրման գործակալությանը՝ արդյոք Կազմակերպությունն առաջարկում է զեղչ հաշվեգրված գումարից՝ ելնելով բուժառուի կարգավիճակից՝ որպես կանխիկ վճարող բուժառու (երրորդ կողմի հատուցում չկա), հավաքագրման գործակալությունն անմիջապես կվավերացնի բոլոր կանխիկ վճարող բուժառուների համար հատկացվող բուժառուի համար զեղչը և, անհրաժեշտության դեպքում, կտեղեկացնի բուժառուին Կազմակերպության ֆինանսական օգնության ծրագրի մասին: Եթե բուժառուն ցանկանում է քննարկել տրամադրված զեղչից բարձր հավելյալ զեղչի մասին, գործակալությունը կարող է տեղեկացնել Կազմակերպությանը համապատասխանաբար հաշիվը ճշգրտելու թույլտվության համար:
- v. Մինչ բուժառուի դեմ որևէ դատական հայց ներկայացնելը, հավաքագրման գործակալությունը պետք է ապահովի, որ պարտքերի հավաքագրման արդար պրակտիկային առնչվող բոլոր իրավական և կարգավորող պահանջները համապատասխանում են, և հաստատի, որ բազմաթիվ փորձեր են կատարվել՝

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

բուժառուին հասնելու և վերջինիս հետ բանակցելու ուղղությամբ: Հավաքագրման գործակալությունը նաև պետք է.

1. Կատարի բուժառուի ակտիվների և եկամուտների վերլուծություն՝ պարզելու, թե արդյոք բուժառուն ունի դատական հայց ներկայացնելը հիմնավորելու համար բավարար ակտիվներ և եկամուտներ, և
2. Ապահովի Կազմակերպության կողմից վերլուծության վերանայումը և ստանա հաստատում փոխնախագահից, Ֆինանսների և եկամուտների հարցերով գլխավոր տնօրենից կամ նրանց նշանակված անձից՝ նախքան բուժառուի դեմ դատական որևէ հայց ներկայացնելը:

- f. **Ոչ մի հանձնարարական կամ ենթապայմանագիր:** Հավաքագրման գործակալությունները չեն կարող հանձնարարել կամ ենթապայմանագրել որևէ հաշվի հավաքագրում առանց.
- i. Փոխնախագահի, Ֆինանսների և եկամուտների հարցերով գլխավոր տնօրենի կամ նրանց նշանակված անձի նախնական գրավոր համաձայնության, և
 - ii. Սույն Քաղաքականության և Դաշնային ու Կալիֆորնիայի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ նշանակված անձի կամ ենթակապալառուի գրավոր համաձայնության:

- g. **Ընդհանուր պահանջներ նախքան հավաքագրման գործակալության կողմից կատարվող գործողությունը**

- i. **Հետևողականություն հաշվեգրման հաշվետվություններում:** Հաշվեգրման պահին Կազմակերպությունը բոլոր ցածր եկամուտ ունեցող և ապահովագրություն չունեցող բուժառուներին տրամադրում է նույն տեղեկությունը ստացված ծառայությունների և այն ծառայությունների հետ կապված հաշվեգրված գումարների վերաբերյալ, որոնք տրամադրվում են Կազմակերպությունում բուժում ստացող մյուս բուժառուներին: «Ցածր եկամուտ ունեցող և ապահովագրություն չունեցող բուժառու»-ն այն

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

բուժառու է, որն իրավունակ է Ֆինանսական օգնության քաղաքականության շրջանակներում օգնության համար:

- ii. **Ֆինանսական օգնության հասանելիության մասին ծանուցում:** Բոլոր բուժառուներին ուղղված նամակների և քաղվածքների իր հավաքածուի մեջ Կազմակերպությունը պետք է բուժառուներին տեղեկացնելու համար ներառի լեզու, եթե նրանք բավարարում են եկամտի որոշակի պահանջներ, նրանք կարող են իրավունակ լինել կառավարության կողմից հովանավորվող վճարողների ծրագրերին կամ Կազմակերպության ֆինանսական օգնությանը: Բուժառուի հաշիվների մեջ պետք է ներառվեն նաև անունը/անվանումը կամ բաժանմունքը և հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատելու նպատակով:

h. Հավաքագրման գործակալությունների հետ հարաբերությունները

- i. **Համապատասխանությունը օրենքին, քաղաքականությանը և ստանդարտներին:**
 1. Կազմակերպության հետ պայմանագիր ունեցող հավաքագրման գործակալությունները պետք է հաստատեն և միշտ համապատասխանեն սպառողների և բուժառուների պարտքերի հավաքագրման համար կիրառելի Դաշնային և Կալիֆոռնիայի օրենքներին:
 2. Հավաքագրման գործակալություններից պահանջվում է բուժառուների, նրանց ընտանիքների և այլ կոնտակտների հետ վարվել արդարացիորեն, արժանապատվորեն, կարեկցանքով և հարգալից:
 3. Հավաքագրման գործակալությունները պետք է վերանայեն և համապատասխանեն Կազմակերպության քաղաքականություններին և չափանիշներին, այդ թվում՝ առանց սահմանափակման սույն քաղաքականության և Ֆինանսական օգնության քաղաքականության վճարման պլանի դրույթներին:

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- ii. Հավաքագրման գործակալությունների հետ պայմանագրեր կնքելու ստանդարտներ: Կազմակերպությունը չպետք է ներգրավի հավաքագրման որևէ գործակալություն՝ բուժառուների հաշիվները հավաքագրելու համար, քանի դեռ.
 - 1. Պայմանավորվածությունը ամրագրված չէ հավաքագրման գործակալության, փոխնախագահի, ֆինանսների և եկամուտների հարցերով գլխավոր տնօրենի կամ նրանց նշանակված անձի կողմից ստորագրված գրավոր համաձայնագրով, և
 - 2. Գրավոր համաձայնագիրը կցված չէ սույն քաղաքականությանը կամ չի ներառում, որպես իրեղեն ապացույց, սույն քաղաքականությանը համապատասխանող լեզու և չի պահանջում հավաքագրման գործակալությունից համապատասխանություն:

i. Հաշվառում

- i. Կազմակերպությունը պետք է պահպանի սույն քաղաքականության պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար համապատասխան փաստաթղթեր:
- ii. Կազմակերպությունը պետք է սույն քաղաքականությունը ներկայացնի Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի հասանելիության և տեղեկատվության վարչությանը («HCAI»), ինչպես պահանջվում է կիրառելի օրենքով:
- iii. Կազմակերպության հետ պայմանագիր ունեցող հավաքագրման յուրաքանչյուր գործակալությունից պահանջվում է պահպանել սպառողների պարտքերի հավաքագրման Դաշնային և Կալիֆորնիայի օրենքների պահանջներին և բոլոր այլ պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխան այնպիսի փաստաթղթեր, որոնք հիմնված են սույն քաղաքականության և Ֆինանսական օգնության քաղաքականության ամենաարդի տարբերակի վրա:

III. Սահմանումներ

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- a. **Հավաքագրման գործակալություն** նշանակում է արտաքին գործակալություն, որին հանձնարարված է կատարել Կազմակերպության համար պարտքերի հավաքագրման գործողություններ:
- b. **Արտակարգ հավաքագրման գործողություններ («ECA»)** նշանակում է հավաքագրման այնպիսի գործողություններ, որոնք Կազմակերպությունը չի ձեռնարկի նախքան տրամաբանական ջանքեր գործադրելը որոշելու՝ արդյոք բուժառուն իրավունակ է ֆինանսական օգնության համար՝ սույն Քաղաքականության ներքո: Արտակարգ հավաքագրման գործողությունները սահմանված են Դաշնային կանոնակարգերի օրենսգրքում՝ 26 CFR 501(r)-6 բաժնում:
- c. **Ֆինանսական օգնության FAP դիմում** նշանակում է դիմում, որը կարող է կիրառվել Կազմակերպության ֆինանսական օգնության ծրագրին մասնակցելու համար: Դիմումների գործընթացների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- d. **Ֆինանսական օգնության ծրագիր** նշանակում է Կազմակերպության այն ծրագիրը, որի դեպքում կիրառվում է բուժառուի մեկ միասնական դիմում՝ ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի ֆինանսական օգնության համար: Ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- e. **Վճարման պլան** նշանակում է համաձայնություն Կազմակերպության և բուժառուի միջև, որով Կազմակերպությունը առաջարկել, իսկ բուժառուն ընդունել է ամսական վճարումներով իր պարտավորությունը մարելու հնարավորությունը: Իրավունակությունը հիմնված է ընտանեկան եկամտի որոշակի շեմերի վրա՝ բացառելով Կենսապահովման հիմնական ծախսերի նվազեցումները:

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

f. Պարզ լեզվով ամփոփագիր նշանակում է փաստաթուղթ, որը ծանուցում է բուժառուներին և այլ անձանց, որ Կազմակերպությունը ֆինանսական օգնություն է առաջարկում Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո՝ համաձայն Դաշնային և Կալիֆոռնիայի օրենքների: Փաստաթուղթը հստակ է, հակիրճ և հեշտ հասկանալի: Պարզ լեզվով ամփոփագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:

Վկայագրման հայտարարություն

Սույն Քաղաքականությունն կներկայացվի Առողջապահության հասանելիության և տեղեկատվական բաժնին (HCAI): Բացի այդ, այն հասանելի կդառնա Կազմակերպության կայքից:

Կազմակերպությունը սուտ վկայության տուգանման ներքո կվկայի հետևյալի մասին՝

1. Քաղաքականությունը ներկայացնող անհատը պատշաճ կերպով լիազորված է ներկայացնել քաղաքականությունը Կազմակերպության անունից:
2. Ներկայացված քաղաքականությունը ճշմարիտ և ճշգրիտ պատճենն է այն Քաղաքականության, որի համար կցված է սույն վկայագիրը:



11/30/23

Անվանում՝ Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Բուժառուների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարման (Policy and Procedure Manager, PPM) փաստաթղթում և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

Փոխնախագահ, Ֆինանսների և եկամուտների
շրջանառության հարցերով գլխավոր տնօրեն

Ամսաթիվ